Խաչիկ Դաշտենց

Հայ գեղջկուհին

Երբ թշնամին արշավել է մեր երկիր,
Կործանելով ամեն գիր ու սրբություն,
Քո զավակի թաթիկներից բռնելով
Դու տարել ես նրան հայոց վարժատուն:
Երբ էրիկըդ դարձել է խեղճ տարագիր,
Ու լուսաստղը շփոթվել է տանիքիդ,
Դու շալակով ցախ ես կրել լուռ ու մունջ,
Որ վառ պահես ծուխը գեղջուկ տնակիդ:
Ու մտազբաղ, աչքը դատարկ պատերիդ,
Գլխաշորը տաք արցունքիդ քսելով,
Շտապել ես հարևանիդ օգնության՝
Քո տաշտակի վերջին հացը կիսելով:
Դու ես պահել հնամենի մեր լեզուն
Քո սրտի մեջ ու խրճիթում շինական,
Ամեն բառը քո շուրթերին եփելով
Ինչպես կարմիր գաթաները թոնրատան:
Առավոտ վաղ, աքաղաղը չկանչած,
Դու ես հարել մեծ խնոցին՝ երգելով,
Եվ քո արդար բազուկներով մութի մեջ
Արշալույսը կրծքիդ վրա ճեղքելով:
Ինչպես հսկա խաչերկաթը ջրդեղած՝

Տոկացել ես ամեն տեսակ կրակի,
Դու մայր ակիշ մեր անթեղած հույսերի,
Անմար կանթեղ մեր լուսեղեն հավատի:
Հիմա նորից հայրենիքում մեր նորոգ
Եվ օտարի այն հեռավոր լուսնի տակ,
Դու ես պահում պատիվը հայ օջախի,
Տան խորշի մեջ դարեր վառվող սուրբ ճրագ:
1960